# ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

## ՀՐԱՄԱՆ

«2» դեկտեմբեր 2021թ. N 655/ԼՍ

**ք. Ստեփանակերտ**

### *ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ*

Հանրակրթական առարկաների նկատմամբ հատուկ կարողություններ ունեցող և առանձին հետաքրքրություն ցուցաբերած սովորողների վերհանման, ինչպես նաև գիտության հիմունքների ուսումնասիրման նկատմամբ սովորողների շրջանում հետաքրքրություն առաջացնելու նպատակով

***ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝***

1. Արցախի Հանրապետության դպրոցականների 2021-2022 ուսումնական տարվա առարկայական օլիմպիադան կազմակերպել ու անցկացնել 3 փուլով՝ ներքոբերյալ առարկաների գծով

-հայոց լեզու, հայ գրականություն, օտար լեզու (անգլերեն, ռուսաց լեզու, գերմաներեն, ֆրանսերեն), պատմություն, հայոց եկեղեցու պատմություն, աշխարհագրություն, քիմիա, կենսաբանություն, մաթեմատիկա, ֆիզիկա, ինֆորմատիկա և նախնական զինվորական պատրաստություն:

Դպրոցական առարկաների օլիմպիադայի անցկացման ժամկետներն են՝

-դպրոցական՝ առաջին փուլ՝ մինչև 2021թ. դեկտեմբերի 10-ը

-շրջանային (քաղաքային)՝ երկրորդ փուլ՝ մինչև 2021թ. դեկտեմբերի 30-ը

-հանրապետական՝ երրորդ փուլ՝ 2022թ. հունվարի 22-ից սկսած:

Օլիմպիադայի շրջանային (քաղաքային) փուլը անցկացնել հետևյալ ժամանակացույցով.

-մաթեմատիկա՝ դեկտեմբերի 13-ին (կարող են մասնակցել սկսած 5-րդ դասարանից մինչև 12-րդ դասարանի աշակերտները),

- ֆիզիկա՝ դեկտեմբերի 14-ին,
- ինֆորմատիկա՝ դեկտեմբերի 15-ին,
- քիմիա՝ դեկտեմբերի 16-ին,
- կենսաբանություն՝ դեկտեմբերի 17-ին,
- աշխարհագրություն՝ դեկտեմբերի 18-ին,

-հայ գրականություն՝ դեկտեմբերի 20-ին,

-հայոց լեզու՝ դեկտեմբերի 21-ին,

-ռուսաց լեզու՝ դեկտեմբերի 22-ին,

-անգլերեն, գերմաներեն և ֆրանսերեն՝ դեկտեմբերի 23-ին,

-պատմություն՝ դեկտեմբերի 24-ին,

-նախնական զինվորական պատրաստություն՝

-հայոց եկեղեցու պատմություն՝ դեկտեմբերի 25-ին:

Բոլոր առարկաների արդյունքները նախարարություն ներկայացնել մինչև 2022թ. հունվարի 13-ը՝ ըստ ներկայացվող հավելվածների (կցվում են):

2. Օլիմպիադաների կազմակերպման ու անցկացման համար ստեղծել կազմկոմիտե՝ հետևյալ կազմով.

| | |
|---|---|
| Մ. Համբարձումյան | -ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (այսուհետ՝ նախարարություն) նախարարի տեղակալ, կազմկոմիտեի նախագահ |
| Ռ. Մուսայելյան | -նախարարության աշխատակազմի ԿԳ վարչության պետ, կազմկոմիտեի նախագահի տեղակալ |
| Մ. Մխիթարյան | -նախարարության աշխատակազմի կրթության պետական տեսչության պետ |
| Ռ. Բոզիյան | -նախարարության աշխատակազմի ԿԳ վարչության հանրակրթության բաժնի վարիչ |
| Մ. Բաղունց | -նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ |
| Ա. Անտոնյան | -Ստեփանակերտի հ. 9 հիմնական դպրոցի տնօրեն |

3. Նախարարության կրթության և գիտության վարչությանը, կրթության պետական տեսչությանը՝

ա) նախապատրաստել ԱՀ դպրոցականների հանրապետական օլիմպիադայի շրջանային (քաղաքային) փուլի անցկացման առաջադրանքները. ժամկետը՝ մինչև դեկտեմբերի 10-ը (էլեկտրոնային և թղթային տարբերակով).

բ) լրատվական միջոցներով, «Լուսարար» թերթի էջերում լուսաբանել ԱՀ դպրոցականների առարկայական օլիմպիադաների նախապատրաստման ընթացքն ու արդյունքները.

գ) «ԱՀ դպրոցականների 2021-2022 ուստարվա հանրապետական օլիմպիադայի արդյունքների մասին» հարցը ներկայացնել նախարարին կից խորհրդակցության քննարկմանը:

4. Ընդունել ի գիտություն, որ՝

ա)օլիմպիադայի 1-ին փուլի առաջադրանքները կազմվում են ԱՀ շրջանների վարչակազմերի և Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմերի կրթության և սպորտի բաժինների այսուհետ՝ կրթության բաժիններ) առարկայական մեթոդխորհուրդների կողմից՝ հանրակրթական դպրոցների առարկայական մեթոդխորհուրդների առաջարկությունների հիման վրա.

բ) օլիմպիադայի 2-րդ փուլի առաջադրանքները, բացի ինֆորմատիկա, առարկայից, կազմվում են նախարարության մասնագետների կողմից.

գ)օլիմպիադայի 3-րդ փուլն անց է կացվում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից կազմված մարզային փուլի առաջադրանքներով (ժամանակացույցը կտրամադրվի առաջիկայում (հավելված 1).

դ)ԱՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի 3-րդ փուլում հաղթող ճանաչված դպրոցականները կպարգևատրվեն նախարարության գովասանագրերով, պատվոգրերով և դրամական պարգևներով.

ե) օլիմպիադայի 3-րդ փուլի հաղթողները կմասնակցեն ՀՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի եզրափակիչ փուլին:

5. Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի աշխատակազմերի կրթության և սպորտի բաժինների վարիչներին՝

սահմանված ժամկետներում կազմակերպել ու անցկացնել օլիմպիադայի դպրոցական և շրջանային (քաղաքային) փուլերը և մինչև 2022 թվականի հունվարի 13-ը նախարարության ԿԳ վարչության ներկայացնել շրջանային (քաղաքային) փուլում հաղթող ճանաչված ու հանրապետական փուլին մասնակցելու իրավունք նվաճած դպրոցականների ցուցակները՝ ըստ առարկաների ու ըստ դասարանների, ինչպես նաև մանրամասն հաշվետվություն՝ ըստ պահանջվող ձևի՝ հավելված 3,4 (կցվում են):

6. Նախարարության ֆինանսատնտեսագիտական վարչությանը՝

ԱՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլի կազմակերպման, ինչպես նաև օլիմպիական թիմերի՝ ՀՀ տարբեր քաղաքներում կայանալիք ԱՀ դպրոցականների առարկայական օլիմպիադաներին մասնակցությունն ապահովելու համար պահանջվող ժամկետներում կազմել ծախսերի նախահաշիվներն ու ներկայացնել հաստատման:

7. Ընդհանուր բաժնին՝

Սույն հրամանի բովանդակությունը տեղեկացնել նախարարության պատասխանատու աշխատողներին, կրթության և սպորտի բաժինների վարիչներին:

8. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը հանձնարարել նախարարության ԿԳ վարչության պետ Ռ. Մուսայելյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РА
MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT OF THE RA
90005336

*Լ. Ղարախանյան*